

ԿԱՐԾԻՔ

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի նախագծի վերաբերյալ

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի նախագծի¹ վերաբերյալ նկատառումները ներկայացվում են ստորև.

1. Նախագծի 13-րդ հոդվածի 6-րդ մասում նշվում է, որ *տեսողական խանգարումներ ունեցող անձանց համար 13-րդ հոդվածի դրույթներին համապատասխան ապահովվում է դատական ակտերի հասանելիությունը մատչելի եղանակով:*

Մինչդեռ, Նախագծի 13-րդ հոդվածի 5-րդ մասով առաջարկվում է միայն լսողական կամ խոսակցական խնդիրներ ունեցող անձանց համար սուրդոթարգմանության ապահովում, ինչը չի կարող լուծել մատչելիության խնդիրը տեսողական խնդիրներ ունեցող անձանց համար: Ուստի, Նախագծի 6-րդ մասում պետք է նախատեսվեն երաշխիքներ՝ տեսողական խնդիրներ ունեցող անձանց համար ապահովելու դատական ակտերի հասանելիությունը՝ *Բրայլի այբուբենի, հարմարեցված համակարգչային ծրագրով էլեկտրոնային տարբերակն ընթերցելու և այլ միջոցներով:*

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք Նախագծի 13-րդ հոդվածի 6-րդ մասում կատարել անհրաժեշտ փոփոխություններ:

2. Նախագծի 17-րդ հոդվածում տեղ է գտել նոր դրույթ, որով կարգավորվում է միմյանց հետ փոխկապակցված մի քանի պահանջներով գործերի ենթակայությունը: Մասնավորապես՝ միմյանց հետ փոխկապակցված մի քանի պահանջներով գործը, եթե այդ պահանջներից մեկը ենթակա է առաջին աստիճանի դատարանին, իսկ մյուսը՝ վարչական դատարանին, քննում է այն դատարանը, որին ենթակա է հիմնական պահանջը: Համանման նորմ սահմանված է նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 11-րդ հոդվածում:

Հարկ է նշել, որ վարչական դատավարություն, ի տարբերություն քաղաքացիական դատավարության, հիմնված է բոլորովին այլ սկզբունքների վրա: Բացի այդ, վարչական և քաղաքացիական գործերով վարույթներում տարբեր են դատարանի դերը և լիազորությունները:

Տվյալ հանգամանքը հաշվի առնելով՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 11-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսվում է, որ քաղաքացիաիրավական աժանցյալ պահանջ քննելիս դատարանը կիրառում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի կանոնները, եթե դրանց կիրառումը չի հակասում վարչական դատավարության՝ սույն օրենսգրքով ամրագրված սկզբունքներին:

¹ Այսուհետ՝ Նախագիծ

Նույն սկզբունքով առաջարկում ենք Նախագծի 17-րդ հոդվածում ավելացնել նոր կետ, համաձայն որի վարչական ածանցյալ պահանջ քննելիս քաղաքացիական դատարանը կիրառում է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի կանոնները, եթե դրանց կիրառումը չի հակասում ՀՀ քաղաքացիական դատավարության՝ սույն օրենսգրքով ամրագրված սկզբունքներին:

3. Նախագծի՝ «Գործին մասնակցող անձանց իրավունքները և պարտականությունները» վերտառությամբ 33-րդ հոդվածում տեղ չի գտել Օրենսգրքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի այն դրույթը, համաձայն որի գործին մասնակցող անձինք իրավունք ունեն հարցեր տալ դատարանին: Տվյալ դրույթը չնախատեսելը մի շարք դեպքերում կարող է տարաբնույթ մեկնաբանվել և բարդություններ առաջացնել դատավարության մասնակիցների համար:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք Նախագծի 33-րդ հոդվածում գործին մասնակցող անձանց իրավունքների շարքում ներառել նաև գործին մասնակցող անձանց՝ դատարանին հարց տալու իրավունքը:

4. Նախագծի 40-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսվում է, որ որպես վկա չի կարող հարցաքննվել նաև Մարդու իրավունքների պաշտպանը՝ գործի այն փաստերի առնչությամբ, որոնք նրան հայտնի են դարձել իր պարտականությունները կատարելիս:

Պետք է նշել, որ «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» սահմանադրական օրենքի նախագծի² 4-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանվում է, որ պաշտպանը չի կարող բացատրություն տալ կամ հարցաքննվել որպես վկա բողոքի կապակցությամբ իր որոշման, իր մոտ գտնվող բողոքի կամ բողոքին առնչվող փաստաթղթի էության վերաբերյալ կամ դրանք տրամադրել ծանոթացման այլ կերպ, քան օրենքով նախատեսված կարգով: *Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչները կարող են հարցաքննվել որպես վկա, բացառություններ փալ բողոքի կապակցությամբ Պաշտպանի որոշման, իրենց մոտ գտնվող բողոքի կամ բողոքին առնչվող փաստաթղթի էության վերաբերյալ կամ դրանք տրամադրել ծանոթացման միայն Պաշտպանի գրավոր համաձայնությամբ:*

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկում ենք Նախագծի 40-րդ հոդվածի 3-րդ մասը համապատասխանեցնել «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» սահմանադրական օրենքի նախագծի 4-րդ հոդվախի 3-րդ մասի կարգավորումներին:

5. Նախագծի 66-րդ հոդվածը սահմանում է դատական հանձնարարության կարգով վկայի հարցաքննության ընթացակարգը: Սակայն նշված հոդվածով կարգավորված չեն այն դեպքերը, երբ հարցաքննության ենթակա անձի ներկայությունն անհնար է ապահովել դատարանում:

² <http://parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=40646>

Օրինակ՝ որպես դատարանում ներկայություն ապահովելու այլընտրանք Նախագծի 262-րդ հոդվածով նախատեսված է, որ գործը պարզեցված վարույթի կարգով քննելիս գործին մասնակցող անձի կամ նրա ներկայացուցչի միջնորդությամբ դատարանը թույլատրում է նրան մասնակցել դատական նիստին *տեսաձայնային* հեռահաղորդակցության միջոցների կիրառմամբ, եթե դատական նիստերի դահլիճում տեղադրված է նման հաղորդակցության հնարավորությունն ապահովող համակարգ:

Նմանատիպ կարգավորում նախատեսված է նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագծի 83-րդ հոդվածում, ըստ որի պաշտպանվող անձի հարցաքննությունը կարող է կատարվել տեսահաղորդակցության տեխնիկական միջոցների օգտագործմամբ (տեսակապի միջոցով):

Հաշվի առնելով պրակտիկայում հանդիպող տարբեր գործերի առանձնահատկություններն ու դատավարության կողմերի շահերը՝ առաջարկում ենք Նախագծով սահմանել, որ այն բացառիկ դեպքերում, երբ հարցաքննության ենթակա անձի ներկայությունը դատարանում անհնար է, դատարանը, կողմի միջնորդությամբ կամ սեփական նախաձեռնությամբ, իրավասու է հարցաքննությունը կատարել տեսահաղորդակցության տեխնիկական միջոցների օգտագործմամբ (տեսակապի միջոցով):

6. Նախագծի 89-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ծանուցագիրը համարվում է անձամբ հանձնված, եթե դրա ստացման մասին ապացույցը *ստորագրված է*: Մինչդեռ, նշվածից պարզ չէ, թե ում կողմից պետք է ստորագրված լինի ստացման մասին ապացույցը:

Համեմատության համար նշենք, որ Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին ՀՀ օրենքի 59-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն. «Գրավոր վարչական ակտը, ընդունումից հետո՝ եռօրյա ժամկետում, պետք է հանձնվի վարույթի մասնակիցներին: Դա կարող է իրականացվել պատվիրված փոստով, այդ թվում՝ ստանալու մասին ծանուցմամբ, *հասցեատիրոջը ստորագրությամբ առձեռն հանձնելու*, ինչպես նաև հանձնման այնպիսի եղանակներով, որոնք թույլ են տալիս հաստատել հասցեատիրոջ կողմից ակտը ստանալու կամ օրենքով սահմանված դեպքերում պատշաճ ծանուցված լինելու փաստը: Որպես կանոն, գրավոր վարչական ակտի հանձնումը պետք է կատարվի ակտը վարույթի մասնակիցներին *ստորագրությամբ առձեռն հանձնելու միջոցով*:»:

Հաշվի առնելով ծանուցումների հետ կապված պրակտիկայում առաջացող բազմաթիվ խնդիրները՝ տարակերպ մեկնաբանություններից խուսափելու նպատակով առաջարկում ենք Նախագծի 89-րդ հոդվածը լրացնել հետևյալ կերպ. «Ծանուցագիրը համարվում է առձեռն հանձնված, եթե դրա ստացման մասին անդորրագիրը ստորագրված է *հասցեատիրոջ կողմից*:»:

7. Նախագծի 94-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ եթե հայցվորը օրենքով ազատված է պետական տուրքի վճարումից, կամ դատարանը կիրառել է նման արտոնություն, ապա պետական տուրքը դատական ակտով բռնագանձվում է պետական տուրքի վճարումից չազատված գործին մասնակցող մյուս անձից՝ բավարարված պահանջների չափին համամասնորեն:

Նշված ձևակերպումից, սակայն, պարզ չէ, թե ովքեր են գործին մասնակցող մյուս անձինք: Առաջարկում ենք Նախագծում հստակեցնել նշված եզրույթը:

8. Նախագծի՝ «Հակընդդեմ ապահովումը» վերտառությամբ 125-րդ հոդվածի 2-րդ մասում սահմանվում է, որ հակընդդեմ ապահովում պահանջելու մասին միջնորդությունը քննվում է դատական նիստում՝ այն ստանալուց հետո *տրանսպարենտ* ժամկետում:

Այնուամենայնիվ, նշված ձևակերպումից հասկանալի չէ, թե ինչ հիմքով է Նախագծում սահմանվել նման ժամկետ այն դեպքում, երբ, օրինակ, հայցի ապահովման միջնորդության համար Նախագծի 120-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսվում է, որ հայցի ապահովման միջոց կիրառելու մասին միջնորդությունը դատարանն առանց դատական նիստ հրավիրելու քննում է ոչ ուշ, քան այն *ստանալու հաջորդ օրը*:

Առաջարկում ենք վերանայել Նախագծի 125-րդ հոդվածում հակընդդեմ ապահովման վերաբերյալ միջնորդության քննության համար սահմանված ժամկետը՝ ապահովելու համար դատավարության կողմերի հավասարության և մրցակցության սկզբունքները:

9. Նախագծի 128-րդ հոդվածի 5-րդ մասում սահմանված է, որ *պատասխանին կցվում են հայցադիմումի պատասխանը*, կից ներկայացվող փաստաթղթերը և ապացույցները գործին մասնակցող անձանց ուղարկելը հավաստող ապացույցները:

Առաջարկում ենք խմբագրել տվյալ հոդվածը՝ հստակեցնելով վերջինիս ձևակերպումը:

10. Նախագծի 152-րդ հոդվածով սահմանվում է, որ առաջին ատյանի դատարանը պատասխանողից հայցադիմումի պատասխան ստանալու, իսկ այն չներկայացվելու դեպքում պատասխան ուղարկելու համար սահմանված ժամկետն ավարտվելու, ինչպես նաև սույն օրենսգրքի 367-րդ հոդվածով սահմանված ժամկետում վերադաս դատարանից գործը ստանալու օրվան հաջորդող եռօրյա ժամկետում որոշում է կայացնում նախնական դատական նիստ նշանակելու վերաբերյալ, որը պատվիրված նամակով՝ հանձնման մասին ծանուցմամբ ուղարկվում է գործին մասնակցող անձանց:

Նախագծի նշված հոդվածում, սակայն, սահմանված չեն կարգավորումներ պատշաճ կերպով ծանուցված հայցվորի կամ պատասխանողի, ինչպես նաև դատավարության այլ մասնակիցների չներկայանալու դեպքերի վերաբերյալ: Նման կարգավորում սահմանված է Օրենսգրքի 149⁸-րդ հոդվածով, որի համաձայն պատշաճ կերպով ծանուցված նշյալ անձանց

չներկայանալու դեպքում նախնական դատական նիստը կարող է անցկացվել նրանց բացակայությամբ:

Նույնանման կարգավորումներ նախատեսված են Նախագծի՝ դիմումի քննության (Հոդված 291), վերաքննիչ և վճռաբեկ դատարաններում բողոքի քննության (Հոդված 334, 359) և այլ հարցերին առնչվող մի շարք հոդվածներում:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք Նախագծի 152-րդ հոդվածում կատարել փոփոխություններ նշված հոդվածով սահմանված կարգով ծանուցված հայցվորի կամ պատասխանողի, ինչպես նաև դատավարության մյուս մասնակիցների չներկայանալու դեպքերը կարգավորելու նպատակով:

11. Նախագծի 17-րդ գլխով կարգավորվում է գործի դատաքննությունը, որով սահմանվում են դատաքննության նախապատրաստական մասում կատարվող գործողությունները, ապացույցների հետազոտման հաջորդականությունը և այլն:

Նշված գլխում, սակայն, սահմանված չեն գործը դատարանի կողմից ողջամիտ ժամկետում քննելու երաշխիքներ, այնինչ նման երաշխիքներ սահմանված են Նախագծով վերաքննիչ և վճռաբեկ դատարանների կողմից գործի քննության համար: Մասնավորապես, Նախագծի 333-րդ հոդվածով նախատեսվում է, որ վերաքննիչ դատարանը վճռի դեմ ներկայացված վերաքննիչ բողոքները քննում և որոշում է կայացնում ողջամիտ ժամկետում, բայց *ոչ ուշ քան վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելուց հետո երեք ամսվա ընթացքում*: Իսկ Նախագծի 358-րդ հոդվածը սահմանում է, որ Վճռաբեկ դատարանը վարույթ ընդունված վճռաբեկ բողոքը պետք է քննի և որոշում կայացնի ողջամիտ ժամկետում: Վերաքննիչ դատարանի միջանկյալ դատական ակտի դեմ վարույթ ընդունված վճռաբեկ բողոքը վճռաբեկ դատարանը քննում է *ոչ ուշ քան եռամսյա ժամկետում*:

Ավելին, Օրենսգրքի 111-րդ հոդվածը սահմանում է դատավարական գործողությունների կատարման ժամկետը, ըստ որի գործը դատարանում պետք է քննվի և վճիռ կայացվի ողջամիտ ժամկետում:

Ուստի, առաջարկում ենք Նախագծի 17-րդ գլխում սահմանել գործը դատարանի կողմից ողջամիտ ժամկետում քննելու երաշխիքներ:

12. Նախագծի 166-րդ հոդվածով սահմանվում են հայցը կամ դիմումն առանց քննության թողնելու կարգը և հետևանքները: Հոդվածից, սակայն, դուրս են մնացել Օրենսգրքի նույնաբովանդակ 104-րդ հոդվածի 3³-րդ և 4-րդ կետերը, որոնցով համապատասխանաբար սահմանվում է, որ հայցը կամ դիմումն առանց քննության թողնելու մասին որոշումն անփոփոխ թողնելու մասին որոշումը ստանալուց հետո դատարանը պարտավոր է գործին մասնակցող անձանց միջնորդությամբ մեկշաբաթյա ժամկետում վերացնել հայցի ապահովմանն ուղղված միջոցները և հայցը կամ դիմումն առանց քննության թողնելու համար հիմք հանդիսացած

հանգամանքները վերանալուց հետո հայցվորը կամ դիմողն իրավունք ունի դիմելու դատարան՝ գործով վարույթը վերսկսելու համար:

Նախագծի 166-րդ հոդվածն առաջարկում ենք լրացնել Օրենսգրքի վերոնշյալ դրույթներով:

13. Նախագծի 167-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ առաջին ատյանի դատարանը դատավարության ցանկացած փուլում կարճում է գործի վարույթը, եթե *վեճն ըստ էության սպառվել է*:

Անհրաժեշտ է նշել, որ պարզ չէ Նախագծում օգտագործվող «վեճն ըստ էության սպառվել է» արտահայտության բովանդակությունը, որն առաջարկում ենք հստակեցնել:

14. Նախագծի 189-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանվում է «*երեխայի շահերի առավելագույն ապահովման անհրաժեշտությունից ելնելով*» ձևակերպումը, մինչդեռ երեխայի իրավունքների վերաբերյալ միջազգային փաստաթղթերում ընդունված է «*երեխայի լավագույն շահ*» եզրույթը:

Այսպես, երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի և տվյալ ոլորտում գործող միջազգային այլ ստանդարտների համաձայն՝ երեխաների նկատմամբ բոլոր գործողությունները ձեռնարկելիս առաջնահերթ ուշադրություն պետք է դարձվի «*երեխայի լավագույն շահերին*»: Վերջինս էապես տարբերվում է «երեխայի շահ» եզրույթից, որով լիարժեքորեն չի արտացոլվում համապատասխան մարմինների կողմից երեխային վերաբերող հարցերում երեխայի համար բացառապես լավագույն լուծում հանդիսացող որոշումների կայացման սկզբունքը:

Նշված Կոնվենցիայով ամրագրված երեխայի լավագույն շահի վերաբերյալ երեխայի իրավունքների կոմիտեի թիվ 14 Ընդհանուր մեկնաբանության (2013) համաձայն՝ երեխայի լավագույն շահերի հաշվի առնելը ենթադրում է երեխայի՝ սեփական կարծիքներն ազատորեն արտահայտելու իրավունքի ապահովումը, ընդ որում՝ երեխային վերաբերող բոլոր հարցերում պատշաճ ուշադրություն պետք է դարձվի իր արտահայտած տեսակետներին: Միաժամանակ, ցանկացած որոշում, որի կայացման ժամանակ հաշվի չի առնվել երեխայի տեսակետը կամ դրան պատշաճ ուշադրություն չի դարձվել, հնարավորություն չի տալիս երեխային որոշելու, թե որն է իր լավագույն շահը:

Միաժամանակ, «երեխայի լավագույն շահ» եզրույթն օգտագործվում է Նախագծի 228-րդ հոդվածի 2-րդ մասի 11-րդ, ինչպես նաև 230-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետերում: «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտում միևնույն հասկացությունը սահմանելիս կամ միևնույն միտքն արտահայտելիս պետք է կիրառվեն միևնույն բառերը, տերմինները կամ բառակապակցությունները՝ որոշակի հերթականությամբ:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք Նախագծի 186-րդ հոդվածի 2-րդ մասում «երեխայի շահ» եզրույթը փոխարինել «երեխայի լավագույն շահ» ձևակերպմամբ:

15. Նախագծի 199-րդ հոդվածով սահմանվում է, որ խմբային հայցով դատական ակտի դեմ բողոքը կարող է ներկայացվել բոլոր հայցվորների անունից:

Սակայն պարզ չէ, թե արդյոք բոլոր դեպքերում խմբային հայց ներկայացրած հայցվորներից բոլորը պետք է ներկայացնեն դատական ակտի դեմ բերվող բողոքը, թե՛ ոչ: Նշված դրույթի կիրառման ժամանակ տարաբնույթ մեկնաբանություններից զերծ մնալու նպատակով առաջարկում ենք վերախմբագրել Նախագծի 199-րդ հոդվածը՝ կարգավորելով վերոշարադրյալ խնդիրը:

16. Նախագծի 176-րդ և 211-րդ հոդվածներն ունեն նույն՝ «Առաջին ատյանի դատարանի վճիռը» վերնագրերը: Բացի այդ, Նախագծի տարբեր հոդվածների վերնագրերը դրված է «Դատարանի վճիռը» (օրինակ՝ հոդված 198, 207, 214, 230, 236, 241 և այլն)՝ յուրաքանչյուր դեպքում նկատի ունենալով առաջին ատյանի կողմից կայացված վճիռը:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտում միևնույն հասկացությունը սահմանելիս կամ միևնույն միտքն արտահայտելիս պետք է կիրառվեն միևնույն բառերը, տերմինները կամ բառակապակցությունները՝ որոշակի հերթականությամբ:

Ուստի, առաջարկում ենք Նախագծի 176-րդ և 211-րդ հոդվածների վերնագրերը շարադրել «Դատարանի վճիռը» վերտառությամբ:

17. Նախագծի 216-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ քաղաքացուն սահմանափակ գործունակ ճանաչելու վերաբերյալ դիմումի մեջ շարադրվում են այն հանգամանքները, որոնք վկայում են, որ *ոգելից խմիչքներ կամ թմրամիջոցներ չարաշահող, ինչպես նաև մոլեխաղերով հրապուրվող քաղաքացին* իր ընտանիքը դրել է նյութական ծանր կացության մեջ:

Միաժամանակ, Նախագծի 216-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է, որ քաղաքացուն անգործունակ ճանաչելու վերաբերյալ դիմումի մեջ շարադրվում են այն հանգամանքները, որոնք վկայում են *քաղաքացու հոգեկան խանգարման մասին*, և որոնց հետևանքով նա չի կարող հասկանալ իր գործողությունների նշանակությունը կամ ղեկավարել դրանք:

Այսպիսով, ստացվում է, որ Նախագծի կարգավորումներով համաչափ մոտեցում չի ցուցաբերվում անձի գործունակության սահմանափակմանն իր մոտ հոգեկան առողջության խնդիրների առկայության և դրանց համեմատական սրության ու ծանրության առումով: Մասնավորապես, ինչպես Նախագծով առաջարկվող, այնպես էլ Օրենսգրքում ամրագրված կարգավորումներով հոգեկան խանգարման դեպքում անձի գործունակությունը ենթակա է սահմանափակման ամբողջությամբ, իսկ սահմանափակ գործունակ ճանաչվելու ինստիտուտը

կիրառվում է այլ հանգամանքներում, որոնք կապված չեն անձի մոտ հոգեկան խանգարման առկայության հանգամանքի հետ: Նշված մոտեցումը խնդրահարույց է միջազգային մի շարք չափանիշների, ինչպես նաև ՀՀ սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումների տեսանկյունից:

Այսպես, Շտուկատուրովն ընդդեմ Ռուսաստանի գործով կայացված վճռով³ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն⁴ ընդգծել է, որ անձին անգործունակ ճանաչելը միջամտություն է վերջինիս անձնական կյանքը հարգելու իրավունքին: Տվյալ գործում Շտուկատուրովին, ում մոտ բժիշկներն արձանագրել էին հոգեկան առողջության որոշակի խնդիրներ, լիովին անգործունակ ճանաչելը ՄԻԵԴ-ը համարել էր անհամաչափ՝ հետապնդվող իրավաչափ նպատակին: Միաժամանակ, ՄԻԵԴ-ի կողմից խնդրահարույց է գնահատվել նաև Ռուսաստանի Դաշնության օրենսդրությամբ գործունակության և անգործունակության միջև որևէ միջանկյալ, այլընտրանքային (*բացառությամբ ոգելից խմիչքներից կամ թմրամիջոցներից կախվածություն ունեցողների*) տարբերակի բացակայությունը: Այսինքն, օրենսդրությունը չէր ցուցաբերում անհատական մոտեցում յուրաքանչյուր դեպքին՝ հաշվի առնելով այն տրամաբանությունը, որ ոչ բոլոր հոգեկան առողջության խնդիրներն են հանգեցնում անձի գործունակության ամբողջական կորստին:

Այս կապակցությամբ ՀՀ սահմանադրական դատարանն իր թիվ ՍԴՈ-1197 որոշմամբ, անդրադառնալով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում կիրառվող «գործունակություն», «անգործունակություն» և «սահմանափակ գործունակություն» հասկացություններին, արձանագրել է. *«օրենսդրական փոփոխությունների ընթացքում համապատասխան անդրադարձ պետք է լինի նաև տվյալ խնդրին, ինչը թույլ կտա բացառել անձանց գործունակության նկատմամբ անհամաչափ միջամտությունները՝ առավել ամբողջական դարձնելով անձին «անգործունակ» կամ «սահմանափակ գործունակ» ճանաչելու հիմքերը»:*

Հաշվի առնելով վերոնշյալը, ի կատարումն ՄԻԵԴ-ի և ՀՀ սահմանադրական դատարանի դիրքորոշումներին՝ առաջարկում ենք անձին սահմանափակ գործունակ ճանաչելու վերաբերյալ ներկայացվող դիմումում նշվող տեղեկությունները չսահմանափակել միայն ոգելից խմիչքներ կամ թմրամիջոցներ չարաշահելու, ինչպես նաև մոլեխաղերով հրապուրվելու վերաբերյալ տեղեկություններով՝ *բացառելու համար անձանց գործունակության նկատմամբ անհամաչափ միջամտությունները:*

18. Նախագծի 218-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ քաղաքացին իրավունք ունի դատահոգեբուժական փորձաքննությանը ներկայանալ իր փաստաբանի հետ:

³ Տե՛ս Շտուկատուրովն ընդդեմ Ռուսաստանի 2008 թ.-ի մարտի 27-ի վճիռը, գանգատ թիվ 44009/05, 91-95-րդ կետեր

⁴ Այսուհետ՝ ՄԻԵԴ

Նշենք, սակայն, որ քաղաքացիական գործի քննության ընթացքում փաստաբանից բացի, որպես անձի ներկայացուցիչ, կարող են հանդես գալ նաև այլ անձինք: Այսպես, Նախագծի 44-րդ հոդվածով սահմանվում է, որ գործին մասնակցող անձը կարող է դատարանում իր գործը վարել անձամբ կամ մեկ կամ մի քանի ներկայացուցիչների միջոցով:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք Նախագծի 218-րդ հոդվածով սահմանել, որ քաղաքացին իրավունք ունի դատահոգեբուժական փորձաքննությանը ներկայանալ իր *ներկայացուցիչ* հետ:

19. Նախագծի 228-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ ենթակետով սահմանվում է, որ *երեխա որդեգրելու վերաբերյալ դիմումին, ի թիվս այլնի, պետք է կցվի տասը տարին լրացած երեխայի համաձայնությունը*:

Հարկ է նշել, որ որդեգրման ժամանակ երեխայի համաձայնությունը ստանալու վերաբերյալ նման տարիքային սահմանափակում նախատեսելը նպատակահարմար չէ, ավելին՝ դա չի բխում Երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի⁵ 12-րդ և 13-րդ հոդվածներում սահմանված դրույթներից: Նշենք նաև, որ ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի՝ Կոնվենցիայի կիրառման վերաբերյալ 2007թ. ձեռնարկում չի նախատեսվում որևէ տարանջատում/բացառություն երեխայի կարծիքի արտահայտման կապակցությամբ. այնտեղ նշվում է միայն, որ ցանկացած դեպքում որդեգրումը կարգավորող օրենսդրությունը պետք է նախատեսի երեխայի համաձայնությունը ստանալու վերաբերյալ պահանջ:

Միաժամանակ, Կոնվենցիայի 12-րդ հոդվածի համաձայն՝ իր հայացքները ձևակերպելու ընդունակ երեխայի համար մասնակից պետություններն ապահովում են դրանք ազատորեն արտահայտելու իրավունք երեխային վերաբերող բոլոր դեպքերում: Ավելին, պատշաճ ուշադրություն պետք է ցուցաբերվի երեխայի հայացքների նկատմամբ՝ *վերջինիս տարիքին և հասունությանը համապատասխան*: Այդ նպատակով երեխային հնարավորություն է տրվում իրեն վերաբերող ցանկացած վարչական քննության ժամանակ, ներպետական օրենսդրությամբ նախատեսված կարգով լսված լինել թե՛ անմիջականորեն, թե՛ իր ներկայացուցիչ կամ համապատասխան մարմնի միջոցով:

Ավելին, Կոնվենցիայով ամրագրված երեխայի լավագույն շահի վերաբերյալ Երեխայի իրավունքների կոմիտեի թիվ 14 Ընդհանուր մեկնաբանության (2013) համաձայն՝ երեխայի լավագույն շահերը հաշվի առնելը ենթադրում է երեխայի՝ սեփական կարծիքներն ազատորեն արտահայտելու իրավունքի ապահովում, ընդ որում, երեխային վերաբերող բոլոր հարցերում պատշաճ ուշադրություն պետք է դարձվի վերջինիս արտահայտած տեսակետներին:

Երեխայի կարծիքը հաշվի առնելու հետ կապված նմանատիպ խնդիր առկա է նաև Նախագծի 229-րդ հոդվածի 1-ին մասում, համաձայն որի երեխաների որդեգրումը հաստատելու մասին գործերը դատարանը քննում է խնամակալության և հոգաբարձության

⁵ Այսուհետ՝ Կոնվենցիա

մարմնի, որդեգրել ցանկացող անձի և տասը տարին լրացած երեխայի պարտադիր մասնակցությամբ, որին դատարանը հարցեր է ուղղում՝ որդեգրման վերաբերյալ երեխայի կարծիքը պարզելու համար: Անհրաժեշտության դեպքում դատարանը գործի քննությանը կարող է ներգրավել որդեգրվող երեխայի ծնողներին (ծնողին) կամ այլ օրինական ներկայացուցիչներին և այլ շահագրգիռ անձանց:

Ելնելով երեխայի լավագույն շահերի պաշտպանության սկզբունքից՝ առաջարկում ենք որդեգրման գործերը քննելիս, Կոնվենցիայի պահանջներին համահունչ, նախատեսել իր հայացքները ձևակերպելու ընդունակ երեխայի (անկախ տարիքից) մասնակցությունը դատական նիստին ու իր կարծիքը՝ նրա տարիքին ու զարգացման աստիճանին համապատասխան, լսելու իրավունքը առանց նվազագույն տարիքային շեմ սահմանելու:

Միաժամանակ, Նախագծի 228-րդ հոդվածում առկա է մեկ այլ խնդիր՝ կապված իր հայացքները ձևակերպելու ընդունակ որդեգրվող երեխայի՝ իր ազգանվան, անվան, հայրանվան հնարավոր փոփոխության, որդեգրող անձին (անձնաց) որպես որդեգրվող երեխայի ծնող (ծնողներ) գրառելու վերաբերյալ համաձայնությունը ստանալու պայմանի բացակայության հետ:

Կարևորելով երեխայի կարծիքը հաշվի առնելու վերաբերյալ միջազգային պարտավորությունները՝ առաջարկում ենք երեխայի որդեգրման հարցում առանց նվազագույն տարիքային շեմ սահմանելու *պատշաճ ուշադրություն* դարձնել նրա կարծիքին երեխայի *տարիքին և հասունությանը համապատասխան*, միաժամանակ որպես պարտադիր պայման սահմանելով տասը տարին լրացած երեխայի համաձայնությունը, ինչպես նաև նախատեսել իր ազգանվան, անվան, հայրանվան հնարավոր փոփոխության, որդեգրող անձին (անձնաց) որպես որդեգրվող երեխայի ծնող (ծնողներ) գրառելու վերաբերյալ որդեգրվող երեխայի համաձայնությունը ստանալու պահանջ:

Ավելին, Նախագծի 228-րդ հոդվածի 2-րդ մասով նաև սահմանվում է, որ *եթե երեխան ապրել է որդեգրողի ընտանիքում և նրան համարում է իր ծնողը, ապա որդեգրումը բացառության կարգով կարող է կատարվել առանց որդեգրվող երեխայի համաձայնությունը ստանալու*: Նշենք, որ նմանատիպ կարգավորում նախատեսված է նաև ՀՀ ընտանեկան օրենսգրքի 121-րդ հոդվածով, որի համաձայն *եթե մինչև որդեգրման համար դիմում տալը երեխան ապրել է որդեգրողի ընտանիքում և նրան համարում է իր ծնողը, ապա որդեգրումը բացառության կարգով կարող է կատարվել առանց որդեգրվող երեխայի համաձայնությունն ստանալու*:

Հաշվի առնելով վերոնշյալ հիմնավորումները առաջարկում ենք քննարկել նշված դրույթի ամրագրման անհրաժեշտությունը:

20. Նախագծի 240-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ եթե անձը, ում վերաբերյալ լուծվում է *բժշկական հարկադիր հետազոտության և (կամ) բուժման ենթարկելու հարցը*, առողջական

վիճակի պատճառով ի վիճակի չէ մասնակցելու դիմումի քննությանը և ներկայացուցիչ չունի, ապա դիմումի քննությանը պարտադիր է այդ անձի հաշվառման, իսկ հաշվառման վայր չունենալու դեպքում՝ բնակության վայրի խնամակալության և հոգաբարձության մարմնի ներկայացուցչի, իսկ բնակության վայրն անհայտ լինելու դեպքում՝ *դիմողի, իսկ հաշվառման վայր չունենալու դեպքում՝ բնակության վայրի խնամակալության և հոգաբարձության մարմնի ներկայացուցչի մասնակցությունը:*

Նշված ձևակերպումից հասկանալի չէ, թե արդյոք դիմումի քննությանը նշված դեպքում պարտադիր է դիմողի մասնակցությունը:

Հարկ է նշել, որ անձին բժշկական հարկադիր հետազոտության և (կամ) բուժման ենթարկելը Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի (այսուհետ՝ ՄԻԵԿ) իմաստով համարվում է անձի ազատագրկում, քանի որ վերջինս այնտեղ է հայտնվում իր կամքին հակառակ (ազատագրկման սուբյեկտիվ չափանիշը) և չի կարող իր ցանկությամբ լքել հաստատությունը (ազատագրկման օբյեկտիվ չափանիշը): Իսկ հարկադիր հետազոտության և/կամ բուժման ենթարկելու դեպքում, փաստորեն, պարտադիր չէ անձի մասնակցությունը, ինչը պարունակում է անձի ազատության և անձեռնմխելիության հիմնարար իրավունքի անհարկի սահմանափակման ռիսկ:

Այսպես, Շթորքն ընդդեմ Գերմանիայի գործով կայացված վճռով ՄԻԵԴ-ը շեշտել է, որ «ազատագրկում» եզրույթը բաղկացած է սուբյեկտիվ և օբյեկտիվ տարրերից, որտեղ օբյեկտիվ տարրը անձին սահմանափակ տարածքում օբյեկտիվորեն անազատության մեջ զգալի ժամանակով պահելն է, իսկ սուբյեկտիվը՝ երբ անձը չի արտահայտել իր համաձայնությունը ազատագրկման համար⁶:

Համեմատության համար նշենք Նախագծի 217-րդ հոդվածի 1-ին մասը, որով սահմանվում է, որ դատարանը, ելնելով անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչվող անձի առողջական վիճակից, գործը քննում է քաղաքացու հաշվառման, իսկ հաշվառման վայր չունենալու դեպքում, բնակության վայրում կամ հոգեբուժական կազմակերպության *գտնվելու վայրում:*

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք Նախագծում սահմանել բավարար երաշխիքներ և համապատասխան կարգավորումներ, անձի, որի վերաբերյալ լուծվում է բժշկական հարկադիր հետազոտության և(կամ) բուժման ենթարկելու հարցը, դիմումի քննությանը մասնակցելու համար:

21. Նախագծի 259-րդ հոդվածի 1-ին մասում առկա է տեխնիկական խնդիր. սահմանվել է առաջին ատյանի դատարանի կողմից գործը պարզեցված վարույթի կարգով քննելու մասին

⁶ Տե՛ս Շթորքն ընդդեմ Գերմանիայի 2005 թվականի սեպտեմբերի 16-ի վճիռը, գանգատ թիվ 61603/00, կետ 74

որոշում կայացնելու երկու ժամկետ՝ եռօրյա և յոթօրյա: Առաջարկում ենք վերախմբագրել նշված հոդվածը:

22. Նախագծի 272-րդ հոդվածի 1-ին մասում առաջարկում ենք «273-րդ հոդվածում սահմանված ժամկետում մերժվում է» բառերից հետո ավելացնել «եթե» բառը:

23. Նախագծի 278-րդ հոդվածի 1-ին մասի հստակության ապահովման նպատակով առաջարկում ենք այն վերաշարադրել հետևյալ խմբագրությամբ. «Արբիտրաժային վարույթի մասնակիցները, ինչպես նաև այն անձինք, ում իրավունքների ու պարտականությունների վերաբերյալ արբիտրաժը, «Առևտրային արբիտրաժի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն, կայացրել է վճիռ, դատարանում կարող են վիճարկել այդ վճիռը՝ Հայաստանի Հանրապետության տարածքում կայացված արբիտրաժի վճիռը չեղյալ ճանաչելու մասին դիմում ներկայացնելու միջոցով:»:

24. Նախագծի 279-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ ենթակետի համաձայն՝ արբիտրաժի վճիռը չեղյալ ճանաչելու վերաբերյալ դիմումին կից ներկայացվում է *արբիտրաժային համաձայնության բնօրինակը կամ դրա պատշաճ ձևով վավերացված պատճենը, իսկ «Առևտրային արբիտրաժի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ձևերից մեկով արբիտրաժային համաձայնություն կնքելու դեպքում՝ դրա կնքված լինելու մասին ապացույցի բնօրինակը կամ պատշաճ ձևով վավերացված պատճենը:*

Տվյալ դրույթի վերաբերյալ պետք է նշել, որ բոլոր դեպքերում արբիտրաժային համաձայնությունը կնքվում է «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքով սահմանված ձևերից մեկով: Մասնավորապես՝ վերոնշյալ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ արբիտրաժային համաձայնությունը կնքվում է գրավոր: Նշված հոդվածով հստակորեն սահմանվում են նաև դեպքերը, երբ պայմանագիրը համարվում է գրավոր ձևով կնքված:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք Նախագծի 279-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ ենթակետը վերաշարադրել հետևյալ կերպ. «Արբիտրաժի վճիռը չեղյալ ճանաչելու վերաբերյալ դիմումին կից ներկայացվում է արբիտրաժի համաձայնության կնքված լինելու մասին ապացույցի բնօրինակը կամ դրա պատշաճ ձևով վավերացված պատճենը:»:

25. Նախագծի 297-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դատարանը վերադարձնում է ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումը չեղյալ ճանաչելու վերաբերյալ դիմումը, եթե այն ներկայացվել է սույն օրենսգրքի 296-րդ հոդվածի, ինչպես նաև սույն հոդվածի պահանջների խախտմամբ:

Սույն ձևակերպումից, սակայն, պարզ չէ, թե դիմումը վերադարձնելուց հետո որ դեպքերում և ինչ ժամկետում է հնարավոր (եթե կա այդպիսի հնարավորություն) կրկին դիմում ներկայացնել:

Համեմատության համար նշենք Նախագծի 239-րդ հոդվածի 4-րդ մասը, որտեղ նշվում է, որ սույն հոդվածում նշված պահանջները չկատարելու դեպքում դատարանը սույն օրենսգրքի 119-րդ հոդվածով սահմանված կարգով վերադարձնում է դիմումը: Իսկ Նախագծի 119-րդ հոդվածով սահմանվում է, որ հայցադիմումի թերությունները վերացնելու համար առաջին ատյանի դատարանը տրամադրում է եռօրյա ժամկետ՝ սկսած հայցադիմումը վերադարձնելու մասին որոշումն ստանալու պահից, բացառությամբ սույն հոդվածի 1-ին մասի 3-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 10-րդ և 11-րդ կետերով սահմանված դեպքերի: Ստացվում է, որ այս դեպքում սահմանվում է հայցադիմումի վերադարձման դեպքում թերությունների վերացման հստակ ժամկետներ, ինչը չի տարածվի 297-րդ հոդվածի 3-րդ մասի վրա:

Ուստի, առաջարկում ենք համապատասխան փոփոխություն կատարել Նախագծի 297-րդ հոդվածում՝ կարգավորելով նաև ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումը չեղյալ ճանաչելու վերաբերյալ դիմումը վերադարձնելուց հետո կրկին դիմում ներկայացնելու կարգը և ժամկետները:

26. Նախագծի 304-րդ հոդվածով սահմանվում են դատարանի կողմից կատարողական թերթ տալու վերաբերյալ դիմումը քննելու պարզեցված կարգը: Նախագծով նախատեսված դեպքերից բացի, կարծում ենք, որ անհրաժեշտ է կատարողական թերթ տալու վերաբերյալ պարզեցված կարգ սահմանել նաև այն դեպքում, երբ մյուս կողմը չի վիճարկում Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումը մեկ ամսվա ընթացքում, ինչպես դա նախատեսված է Նախագծի 296-րդ հոդվածի 4-րդ մասով:

27. Նախագծի 321-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ վերաքննիչ բողոք չի կարող բերվել, երբ դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելուց հետո անցել է տասը տարի: Նշված ժամկետը ենթակա չէ վերականգնման, բացառությամբ անձի *հիմնարար* իրավունքների խախտման դեպքերի:

Նախագծում սակայն չեն մասնավորեցնում, թե որոնք են համարվում «*հիմնարար իրավունքներ*», ինչը կարող է տարաբնույթ մեկնաբանվել: Ավելին, այդ եզրույթի լայն մեկնաբանման դեպքում այն չի հանդիսանա բացառություն, այլ իրավունքների բոլոր խախտումների դեպքերում հնարավոր կլինի օրինական ուժի մեջ մտած դատական ակտը բողոքարկել այն ուժի մեջ մտնելուց հետո տասը տարի անց:

Ուստի, առաջարկում ենք վերանայել վերոնշյալ դրույթը՝ ապահովելով իրավական որոշակիությունը:

28.Նախագծի 324-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետի համաձայն՝ դատական ակտը բոլոր դեպքերում ենթակա է բեկանման, եթե գործից բացակայում է դատական նիստի արձանագրությունը: Միաժամանակ, Օրենսգրքի 220.4-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատական ակտն ենթակա է բողոքարկման ոչ միայն դատական նիստի արձանագրության, այլև առանձին դատավարական գործողության կատարման արձանագրության բացակայության դեպքում:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք քննարկել Օրենսգրքի նշված դրույթի՝ Նախագծում սահմանելու հնարավորությունը և անհրաժեշտությունը:

29.Նախագծի 324-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետի համաձայն՝ դատական ակտը բոլոր դեպքերում ենթակա է բեկանման, եթե դատական ակտն ազդում է գործին մասնակից չդարձված անձանց իրավունքների և պարտականությունների վրա, բացառությամբ այն դեպքի, երբ դատարանը քննվող գործի մասին ծանուցել է տվյալ անձին, սակայն վերջինս չի ցանկացել ներգրավվել գործին:

Տվյալ հոդվածի հստակության ապահովման նպատակով առաջարկում ենք այն վերաշարադարել հետևյալ խմբագրությամբ. «Դատական ակտն ազդում է գործին մասնակից չդարձված անձանց իրավունքների և պարտականությունների վրա, բացառությամբ այն դեպքի, երբ դատարանը քննվող գործի մասին *պատշաճ* ծանուցել է տվյալ անձին, սակայն վերջինս չի ցանկացել ներգրավվել գործին:»:

30. Նախագծի 327-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը սահմանում է, որ վերաքննիչ բողոքում նշվում են այն դատարանի անվանումը, որի կայացրած դատական ակտի դեմ բերվում է բողոքը, գործի համարը և դատական ակտի կայացման *ամսաթիվը*: Միևնույն ժամանակ, Նախագծի 328-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ վերաքննիչ բողոքի պատասխանում նշվում են դատարանի անվանումը, որի կայացրած դատական ակտի դեմ բերվել է վերաքննիչ բողոքը, գործի համարը և դատական ակտի կայացման *տարին, ամիսը, ամսաթիվը*:

Նմանատիպ ձևակերպումներ առկա են Նախագծի մի շարք հոդվածներում, այդ թվում՝ 148-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում, 178-րդ հոդվածի 2-րդ մասում, 180-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում, 186-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում, 279-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ և 5-րդ կետերում:

Նախագծում տեղ գտած ձևակերպումների միասնականությունը և հստակությունն ապահովելու համար առաջարկում ենք կատարել համապատասխան փոփոխություններ՝ նույնականացնելով Նախագծի նմանատիպ դրույթները:

31. Նախագծի 335-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ վերաքննիչ դատարանը չի կարող կիրառել սույն օրենսգրքի 336-րդ հոդվածի 7-րդ կամ 8-րդ մասով սահմանված լիազորությունները՝ հիմնվելով վերաքննիչ դատարան ներկայացված նոր ապացույցների վրա: Մինչդեռ, Նախագծի 336-րդ հոդվածը չունի 8-րդ մաս: Ուստի, առաջարկում ենք խմբագրել Նախագծի տվյալ հոդվածը:

32. Ի տարբերություն Նախագծի 375-րդ հոդվածով սահմանված նոր հանգամանքներով դատական ակտի վերանայման հիմքերի ցանկի՝ Օրենսգրքի 204.33-րդ հոդվածի 3-րդ մասում, որպես նոր հանգամանքներով դատական ակտի վերանայման հիմք, նշվում է նաև այն դեպքը, երբ Արդարադատության խորհուրդն ընդունել է որոշում, որով տվյալ դատական ակտը կայացրած դատավորը ենթարկվել է կարգապահական պատասխանատվության՝ ՀՀ դատական օրենսգրքի 153 հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված հիմքերից որևէ մեկով:

Գտնում ենք, որ անհրաժեշտ է քննարկել Նախագծում նոր հանգամանքներով դատական ակտի վերանայման հիմքերի շարքում Օրենսգրքի վերոնշյալ դրույթը պահպանելու նպատակահարմարությունը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ նշված դեպքերում տեղի է ունենում նյութական և (կամ) դատավարական նորմի ակնհայտ և կոպիտ խախտում, որը կատարվել է չարամտորեն կամ կոպիտ անփութությամբ (ՀՀ դատական օրենսգրքի 153 հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետեր), ինչը կարող է հիմք հանդիսանա դատական ակտի վերանայման համար:

33. Նախագծի 377-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետը սահմանում է, որ բողոքին կցվում է բողոք ներկայացնելու ժամկետը վերականգնելու մասին միջնորդություն, եթե բողոքը ներկայացվել է սույն օրենսգրքի 377-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ժամկետի խախտմամբ: Մինչդեռ, Նախագծի 377-րդ հոդվածով սահմանվում է նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով դատական ակտի վերանայման բողոքի ձևը և բովանդակությունը, իսկ նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով դատական ակտի վերանայման բողոք ներկայացնելու ժամկետը սահմանվում են Նախագծի 376-րդ հոդվածով:

Առաջարկում ենք Նախագծի 377-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետի «377-րդ» բառը փոխարինել «376-րդ» բառով:

34. Նախագծին կից ներկայացված «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով նախատեսվում է նշված օրենքի 9-րդ հոդվածի 11-րդ կետի «15» թիվը փոխարինել «5» թվով և 12-րդ կետի «10» թիվը փոխարինել «5» թվով:

Ողջունելի է դատարանի վճռի, դատավճռի, դատարանի որոշման պատճենը (կրկնօրինակը) գործի քննությանը մասնակցող կողմերի կամ այլ անձանց գրավոր դիմումի

համաձայն տալու, ինչպես նաև գործին մասնակցող անձանց հայցադիմումին կից փաստաթղթերի պատճենները գործի քննությանը մասնակցող կողմերի կամ այլ անձանց գրավոր դիմումի համաձայն տալու համար պետական տուրքի գումարի նվազեցման առաջարկը, այնուամենայնիվ, գտնում ենք, որ փոփոխությամբ սահմանված 1 էջի համար նախատեսված վճարի չափը դեռևս անհամաչափ բարձր է:

Մասնավորապես, դատական ակտի և այլ փաստաթղթերի պատճենահանված մեկ էջի համար անձը պետք է վճարի 50 դրամ պետական տուրք այն դեպքում, երբ մեկ էջի պատճենահանման կամ տպելու արժեքը մասնավոր կազմակերպություններում միջինում 10-20 դրամ է:

Հաշվի առնելով վերագրյալ՝ առաջարկում ենք վերանայել «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 4-րդ հոդվածի 7-րդ և 8-րդ կետերով առաջարկվող դրույքաչափերի փոփոխությունները:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ